ԹԵՄԱ 3 ԱՐԵՎԵԼՔԻ ԵՎ ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

§ 35. ԱՐԵՎԵԼԱՀՌՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ

1

Իր գեղեցկությամբ առանձնանում էր ***Սուրբ Սոֆիայի*** վեհաշուք տաճարը, որը կայսեր մտահղացմամբ պետք է դառնար աշխարհի ամենամեծ քրիստոնեական եկեղեցին:

Բյուզանդիա այցելած գերմանական դեսպանի գրառումներից

Կոստանդնուպոլսում կայսերական պալատին կից դահլիճն ուներ զարմանահրաշ վեհություն ու գեղեցկություն: Կայսեր գահի առջև կանգնած էր պղնձից, բայց ոսկեզօծ մի ծառ, որի ճյուղերին

նստած էին բրոնզից պատրաստված զանազան թռչուններ: Թռչուններից յուրաքանչյուրը երգում էր իր մեղեդին, իսկ կայսեր նստարանն այնքան հմտորեն էր պատրաստված, որ սկզբում թվում էր ցածր, գրեթե գետնին հավասար, այնուհետև մի քիչ ավելի բարձր, վերջապես, օդի մեջ կախված: Վիթխարի գահը, որպես պահապաններ, շրջապատել էին ոսկեզօծ առյուծները, որոնք իրենց պոչերով կատաղորեն հարվածում էին գետնին, բաց անում երախները, շարժում լեզուները և արձակում բարձր մռնչոցներ: Սովորության համաձայն՝ կայսեր առջև երեք անգամ խոնարհվելուց՝ ողջունելուց հետո, գլուխս բարձրացրի և կայսրին տեսա ուրիշ հագուստով և գրեթե դահլիճի առաստաղի մոտ:



Սուրբ Սոֆիայի տաճարի նկարագրությունը

Այդ ճարտարապետական հրաշքը համաշխարհային ճարտարապետության գլուխգործոցներից մեկն է համարվում: Տաճարին հատուկ շքեղություն է հաղորդում վեհաշուք գմբեթը: X դ. վերջին այն ավերվեց երկրաշարժից: Գմբեթը վերականգնեց հայ ճարտարապետ Տրդատը: Տաճարի ներսում եղած հավատի խորհրդանիշները, խաչանկարները, զարդանախշերը մեծ արժեք են ներկայացնում: Կոստանդնուպոլիսը գրավելուց հետո թուրքերը գմբեթից իջեցրին խաչը, բարձրացրին կիսալուսինը և տաճարը դարձրին մզկիթ:

2

20 տարուց ավելի շարունակվեց պատերազմը Բուլղարական թագավորության դեմ: Ի վերջո բյուզանդական զորքերին հաջողվեց գրավել Բուլղարիան և այն վերածել բյուզանդական պրովինցիայի: Բյուզանդիայի գերիշխանությունը ստիպված էր ճանաչել և Սերբիան:

Հայաստանի նկատմամբ ևս ***Վասիլ II***-ը վարում էր նվաճողական քաղաքականություն: Դիվանագիտական և ռազմական ճնշման միջոցով Բյուզանդիային հաջողվեց տիրանալ Տարոնի, Տայքի իշխանություններին, Վասպուրականի թագավորությանը, իսկ նրա հաջորդները կարողացան գրավել Անին և 1045 թ. վերացնել Բագրատունյաց թագավորությունը: Հայաստանի մեծ մասն ընկավ Բյուզանդիայի տիրապետության տակ:

Բյուզանդիայի այսօրինակ քաղաքականությունը ոչ միայն խաթարեց Հայաստանի բնականոն զարգացումը, այլև զգալի վնաս հասցրեց հենց կայսրությանը՝ թուլացնելով Բյուզանդիայի արևելյան սահմանների պաշտպանությունը, ինչի հետևանքները շուտով իրենց զգալ տվեցին:

2

Երեք օր շարունակ նրանք կողոպտում և ավերում էին պալատներն ու տաճարները, վաճառականների պահեստները և բնակիչների տները: Հրդեհի կրակներում ոչնչացվեցին հին ձեռագրերի գրապահոցները, արվեստի շատ թանկարժեք գործեր, որոնք հարյուրավոր տարիներ պահվում էին Կոստանդնուպոլսում: Կողոպուտին մասնակցում էին նաև խաչակիրների հետ եկած կաթոլիկ հոգևորականները: Կայսրության մայրաքաղաքի ավերն ու կողոպուտը պատճառ դարձան Բյուզանդիայի հետագա թուլացման և անկման: